

ՄԱՐԴՈՒ «ԱՍՏՎԱԾԱՅՄԱՆ» ՈՒՂԻՆ ԸՍՏ ՍՔ. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒ

Տ. Հեթումբահանյա Թարվերդյան

Առաջաբան

Քրիստոնյաների համար գոյություն ունի մի վերերկրային իդեալ, կատարելատիպ, ում երկու հազար տարի ի վեր քրիստոնյա աշխարհը ձգտում է նմանվել, հասնել և միախառնվել: Անշուշտ այդ իդեալը Քրիստոս է, ով դարձավ այն, ինչ մենք ենք, որպեսզի մեզ դարձնի այն, ինչ Ինքն է¹:

Սուրբ Գրքում պատմվում է աշխարհի արարման, մարդու ստեղծման և անկման մասին: Սուրբ Գիրքը խոսում է նաև աստվածային նախախնամության միջոցով սահմանված Աստծու մարդեղացման և փրկագործության պատմության մասին:

Քրիստոսի մարդեղության մասին խոսել են Սուրբ Հոգուց ներշնչված հինկտակարանյան սուրբ այրերը, ինչպես նաև առաքյալները, որոնք արդեն նորկտակարանյան ժամանակաշրջանի ներկայացուցիչներն են, ովքեր անձամբ են տեսել Մարդեղացած Աստծուն և վկայել Նրա մասին²: Միով բանիվ կարելի է ասել, որ Քրիստոսի մասին ճշմարիտ վկայողները աստվածազգայաց և աստվածատես մարդիկ են եղել և աստվածատեսների և աստվածազգայացների շարքին է պատկանում նաև Սբ. Գրիգոր Նարեկացին:

Սբ. Գրիգոր Նարեկացին եղել է ճգնավոր, մաքրակենցաղ սուրբ մի անձնավորություն: Անշուշտ այս երանելի մարդուց առաջ և հետո նույնպես եղել են թե՛ ճգնավորներ, թե՛ մաքրակենցաղ մարդիկ և թե՛ սրբեր, սակայն ոչ բոլորն են արժանացել աստվածոտեսության, ինչպիսին է Սբ. Գրիգոր Նարեկացին³:

Անկասկած, հեշտ չի եղել Սբ. Գրիգոր Նարեկացու հոգևոր կյանքի վերելքի ճանապարհը, սակայն Նարեկացուն հաջողվեց հաղթահարել այդ ճանապարհը՝ փրկելով իր մարմինն ու հոգին: Իր հոգում ունենալով Քրիստոսի անսահման սերը և ինքն էլ անսահման սեր տաժելով դեպի մարդ արարածը չէր կարող

¹ Տե՛ս Irénée de Lyon, *Contre les Hérésies* V, SC 152, Cerf, Paris, 1969, Ներածություն (PG VII, 1119-1224):

² Տե՛ս Մեսրոպ աբեղա Պարսամյան, Լինել Աստուած, Վարդապետական թեզ (անտիպ), Սբ. Էջմիածին 2011, էջ 20-21:

³ Տե՛ս Գրիգոր Պլլոտեան, Գրիգոր Նարեկացի լեզոյի սահմաններուն մէջ, Վենետիկ- Ս. Ղազար, 1985, էջ 78:

ծածուկ պահել մարդկանցից այն ճանապարհը, որով անցել ու դեռ շարունակում էր անցնել ինքը՝ Նարեկացին, այն ճանապարհը, որը տանում էր դեպի փրկություն՝ Հիսուս Քրիստոս: Սբ. Գրիգոր Նարեկացու նշանավոր «Մատեան ողբերգութեան»¹ աշխատությունը ներկայացնում է մի ճանապարհ, որը չունի ոչ ոչ սկիզբ և ոչ վերջ²:

Ճանապարհի մի կողմում մեղավոր մարդն է, իսկ մյուս կողմում՝ Աստված: Նարեկացու կողմից պատկերված ճանապարհը հարթ և հեշտ անցանելի չէ, այլ քարքարոտ և երբեմն-երբեմն էլ անանցանելի: Սակայն երանելի այս այրը անկեղ մորենու նման բոցավառվելով Քրիստոսի սիրով, լինելով «սիրոյ վառարան»³ հաղթահարում է ամեն մի հոգեխռով և հոգեկործան խոչընդոտ: Մատյանը անկրկնելի, աստվածաբույր այնպիսի մի ստեղծագործություն է, որի յուրաքանչյուր տողում հանդիպում ենք Քրիստոսին, Ով իբրև սիրող, գթացող ու ողորմած Հայր լսում է մեղքի տիղմի մեջ թաղված իր որդուն: Մատյան Ողբերգությունը ոչ միայն Նարեկացու, այլև ողջ մարդկության, մեղավոր մարդու հոգու անլռելի ղողանջն է առ Աստված բարձրացած⁴:

Մատյանը իբրև կատարելագործման ճանապարհ, ունի իր հանգրվանները: Այդ ճանապարհն է, որ մարդ անցնելիս դառնում է աստվածազգյաց, աստվածատես և ամենավերջում միանում Աստծուն: Այսպիսով՝ Նարեկացու նախանշած ուղին տանում է դեպի աստվածացում: Տեղին է հիշել Աթանաս Ալեքսանդրացու հետևյալ խոսքը. «Բանը մարդացավ, որպեսզի մենք «աստվածանանք», «որպեսզի մեզ աստվածացնի իր մեջ»⁵:

Պարմենական ակնարկ. Հայ աստվածաբանական մտքի պատմության մեջ աստվածացման երեք աստիճանների ուսմունքը գրեթե բնավ ուսումնասիրված չէ: Առաջին և միակ ակնարկն այս մասին կատարել է Ժան Պիեռ Մահեն՝ Սբ. Գրիգոր Նարեկացու «Մատյանի» ֆրանսերեն իր հրատարակության առաջաբանում:

Սբ. Գրիգոր Նարեկացու Երգ Երգոցի մեկնության իր ուսումնասիրության մեջ Լևոն Պետրոսյանը կիրառում է մի մոդել, որով տալիս է նախատիպը՝ Երուսաղեմի տաճարի կառուցվածքը: Ըստ Պետրոսյանի՝ դրանք այն փուլերն են, որով անցնում է «հարսը» «փեսային» հանդիպելու համար. նա նախ ապաշխարում և մաքրվում է մեղքերից գավիթում, այնուհետև առաքինությունների

¹ Տե՛ս Խաչատրյան Պ. Մ., Ղազինյան Ա. Ա., «Մատեան ողբերգութեան», Երևան, 1985, էջ 56:

² Տե՛ս Աշոտ Պետրոսյան, Նարեկը բժշկարան, Բերձոր, 2002, էջ 57:

³ Տե՛ս Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրեան (Տրապիզոնի), Նարեկ, Հալեպ, 2003, էջ 86:

⁴ Տե՛ս Պողոս Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, Ս. Էջմիածին, 1996, էջ 56:

⁵ Տե՛ս Հակոբ Քյոսեյան, Եկեղեցու վարդապետներ, հայրեր, Երևան, 2007, էջ 50:

կատարման և խորհուրդների միջոցով շնորհներ է ստանում տաճարում և ի վերջո սիրո միությունը միավորվում է փեսայի հետ Սրբություն Սրբոց Խորանում: Ըստ այդմ Եկեղեցու խորհուրդները բաժանվում են երեք խմբերի՝ Ապաշխարություն՝ Գավիթում, Մկրտություն և Դրոշմ՝ Տաճարում, և Հաղորդություն, Պսակ ու Սիրո խորհրդական միություն՝ Սուրբ Խորանում: Այս ամենի հիման վրա Լ.Պետրոսյանը կատարում է Երգ Երգոցի մեկնության «հոգևոր ընթերցում» փրկչաբանական և խորհրդական հարթության վրա:

Սբ. Գրիգոր Նարեկացու կրոնաբարոյական հայացքներին անդրադառնալով Մուշեղ Աբեղա Բաբայանն իր վարդապետական թեզի ավարտին շեշտադրում է Նարեկացու մոտ աստվածացման թեմայի կարևորությունը՝ իբրև հոգևոր-բարոյական կյանքի վերջնանպատակ «Սբ. Գրիգորի հոգևոր փորձառության տրամաբանության համաձայն, զղջումով և ապաշխարությամբ մաքրված մարդու աստվածացումն սկսվում է նրա սրբացումով և ավարտվում է Աստծո հետ միությունը»¹:

Համաձայն Սբ. Գրիգոր Նարեկացու՝ մարդու աստվածացումն իրականանում է Աստծո Միածին Որդու մարդեղությունը, շնորհի միջոցով, քանզի Աստվածորդու մարդեղացմամբ «վայրէջքի» (καταθασις) ճանապարհը հնարավոր է դարձնում մարդկանց «վերելքի» (ανθασις) ճանապարհը, որի մեջ կարևորագույն տեղ է զբաղեցնում Քրիստոսի մարմնի և արյան Սբ. Հաղորդությունը, որի միջոցով մարդ «համամարմին» է դառնում մարմնացյալ Բանի աստվածացած մարմնին²: Նարեկացու Մատյանը իրենից ներկայացնում է վերը նշված երեք մարդկային հոգեվիճակներին հատուկ գրքերի միավորություն՝ պարունակելով մարդկային տարբեր հոգեվիճակներ՝ կռապաշտությունից մինչև աստվածասություն: Նարեկացին իր Մատյանը անվանելով Ողբերգությունների մատյան ողբում է միայն նրա համար, որ մարդ արարածը, ով միակը լինելով Աստծո կողմից արարվածներից Աստծո պատկերով և նմանությամբ, չի կարողանում ըստ պատշաճի ընթանալ, ապրել աստվածահաճո կյանքով և միանալ իր Արարչին: Նարեկացին միմիայն չի ողբում մարդկային արատների և սայթաքումների համար՝ նմանվելով լավկան կանանց, այլ իր Մատյանով ցույց է տալիս ամեն տեսակ խոչընդոտներից ազատման, ազատագրման ուղի՝ մտնելով խորանալով յուրաքանչյուր մարդկային արատի մեջ՝ գտնում է այդ արատների պատճառը և Քրիստոսի աստվածային զորության միջոցով դուրս հանում արա-

¹ Տե՛ս Մուշեղ աբեղա Բաբայան, Սուրբ Գրիգոր Նարեկացու կրոնաբարոյական հայացքներն ըստ «Մատենան ողբերգութեան» ստեղծագործության, Վարդապետական թեզ (անտիպ), Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2010, էջ 143:

² Տե՛ս Մեսրոպ Հայունի, Նարեկեան որոնումներ, Պէյրուս, 2007, էջ 86:

տավորված մարդ անհատին կամ ցույց տալիս վերելքի ուղին, որը, իհարկե, կայանում է Քրիստոսի հետ ձեռք ձեռքի: Նարեկացին ցույց է տալիս, որ ինչ բարոյական ստորին վիճակում էլ գտնվի մարդ, կարող է վերափոխվել, վերանորոգվել՝ հագնելով Քրիստոսի կողմից տրված նոր շապիկը¹:

ա. «Աստվածացման» գաղափարի նախահիմքը Սուրբ Գրքում: որքան էլ որ Նարեկյան դպրոցի կարկառուն ներկայացուցիչ՝ Սբ. Գրիգոր Նարեկացին շատ խորը տիրապետել է հոգևոր և աշխարհիկ գիտություններին, միևնույնն է իր աշխատություններում առկա աստվածաբանական հայացքները բխեցրել է Սուրբ Գրքից: Այդ հայացքների թվում է նաև մարդու «աստվածացման» գաղափարը: Չնայած որ այն արդեն հղկված վիճակով հանդիպում ենք նորապատոնական մտածողների մոտ, սակայն եթե գաղափարախոսության հիմքը չլիներ Սուրբ Գրքը, ապա վարդապետությունը տեղ չէր գտնի Նարեկացու փրկաբանական հայացքներում: Սբ. Գրիգոր Նարեկացին միմիայն «Աղոթամատյան», այսինքն՝ պարզապես աղոթքների ժողովածու չի ստեղծել, այլ այդ աղոթքների շղթայի մեջ բազմազան կարևորագույն հոգևոր գիտելիքներ է համահյուսել²: Օրինակ՝ նրա ցանկացած դրույթ ունի իր աստվածաշնչային հիմնավորումը, ցանկացած հաստատում միայն իր մտքի երևակայությունը չի պարունակում, այլ ուղղակիորեն բխեցվում է Հին կամ Նորկտակարանյան համապատասխան հատվածից կամ խոսքից³:

Աստվածաշունչ մատչանում մարդուն Աստծու նմանությունը հանդիպում ենք Հին Կտակարանի Ծննդոց գլխի Ա. 27-ում, ուր ասվում է, որ մարդ արարվել է Աստծու կողմից և ամենակարևորը Աստծու նմանությամբ և պատկերով: Աստծու նմանությամբ և պատկերով ստեղծվելով՝ մարդ արդեն պարունակում էր աստվածային որոշ տարրեր: Ադամը և Եվան, գործելով առաջին մեղքը, կորցրեցին իրենց աստվածանմանությունը, սակայն մենք տեսնում ենք, որ նույն Ծննդոց Ե. 24-ում Ենովքը և Դ. Թագ. Բ. 11-12-ում Եղիան ստանում են Աստծու մոտ բարձրանալու հնարավորություն:

Ըստ հրեական աստվածաբանության՝ Թորայի իմացությունը և գործառույթությունը մարդուն դարձնում էին հրեշտակային կամ աստվածային: Օրենքը համարվում էր Աստծու էմանացիայի (ճառագայթում) արդյունք: Հետագայում՝ դեռ հինկտակարանյան ժամանակաշրջանում արդեն իսկ զարգանում է մարդու կա-

¹ Տե՛ս Լ. Մ. Գևորգյան, Նարեկյան մտորումներ, Երևան, 1984, էջ 86:

² Տե՛ս Մ. Մկրյան, Գրիգոր Նարեկացի, Երևան, 1955, էջ 191:

³ Տե՛ս Գարեգին աբեղա Հարությունյան, Նարեկը XXI դարի գործնական աստվածաբանության տեսանկյունից, «Էջմիածին», 2003, էջ 65:

տարեւազործման՝ «աստվածացման» գաղափարը¹: Քրիստոնեական Եկեղեցու հայրերի երկերում, սակայն, աստվածացման գաղափարի զարգացման համար հիմք են ծառայում հատկապես սաղմոսերգուի հետևյալ տողերը. «Ես ասացի թէ աստուածք իցէք, կամ որդիք բարձրելոյ ամենեքեան» (Սաղմ. 2Ս. 6), որոնք մեջբերվում են նաև մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի կողմից (հմմտ. Հովհ. Ժ. 34): Աստվածացման ռաբբինիստական պատկերացումները ևս խարսխվում են սաղմոսի հիշյալ տողերի վրա: Օրինակ, Մերքաբբայի խորհրդապաշտությունը, որը հիմնվում էր Աստծու կառք-գահի Եզեկիելյան տեսիլքի վրա (Եզեկ.Ա. 1-28), առաջադրում էր դեպի Աստված մտահամբարձումն Աստծո պատվիրանների կատարման միջոցով: Սաղմ. 2Ս. 6-ում, ռաբբինիստական մեկնության համաձայն, «աստվածները» նրանք են, ովքեր անմահություն են ձեռք բերել՝ Թորայի նկատմամբ հավատարմությանն ի գնահատումն: Հին Կտակարանում առկա նահապետները՝ Աբրահամ, Իսահակ, Հակոբ, ըստ հրեական մտածողության համարվել են սուրբ, սովորական մարդկանցից հոգևոր առումով վեր կանգնած անձինք, քանզի նրանք խոսել են Աստծու հետ: Նահապետների դասին է միանում նաև Մովսեսը, ով Սինա լեռան վրա Աստծուց ստացավ Տասնաբանյան: Մարգարեներից՝ Եսային, Դանիելը, Եզեկիելը, նույնպես առանձնահատուկ տեղ են գրավել հրեական մտածողության մեջ, քանզի խոսել են Աստծու հետ և Աստծու պատգամը փոխանցել հրեա ժողովրդին: Նոր Կտակարանում նույնպես առկա են մարդու աստվածային նմանողության և մարդու «աստվածացման» գաղափարները: Աստվածացման եռաստիճան ճանապարհի՝ մաքրության, լուսավորության և միության հստակ վկայությունները գտնում ենք Ս. Պողոս Առաքյալի թղթերում, ինչպես նաև նրա անձնական փորձառության մեջ: Պողոս Առաքյալը իր գաղափարներին տալիս է լուրջ աստվածաբանական նշանակություն և իմաստ: Ա. Կորնթացիս նամակում նա հիմք է դնում երկրորդ Ադամի գաղափարը, ինչը մարդու աստվածային նմանության ապացույցներից մեկն է:

Պողոս Առաքյալը Հռոմեացիներին ուղղված թղթում՝ (Հռոմ. Ը 22-23) խոսելով Աստծու կողմից Քրիստոսով մեր որդեգրման մասին՝ զարգացնում է «աստվածացման» տեսությունը՝ հիմք է դնում որդեգրման գաղափարը: Պողոս առաքյալը իր թղթերում նաև շատ է օգտագործում՝ Քրիստոսի մեջ, Քրիստոս մեր մեջ, Աստծու որդիներ արտահայտությունները: Պողոս Առաքյալի թղթերում բազում վկայություններ կան նաև մտքի լուսավորության մասին, որը

¹ Տե՛ս Թամար Տասնապետեան, Գրիգոր Նարեկացիի Ողբերգութեան Մատեանը, Անթիլիաս, 1993, էջ 56:

իրագործվում է հիմնականում աղոթքի միջոցով: Կորնթացիներին ուղղված առաջին թղթում նա ուսուցանում է, որ Քրիստոսին կարող է Աստծու Որդի անվանել միայն նա, ով իր մեջ ունի Ս. Հոգի. «Վասն որոյ ցուցանե՛մ զի ո՛չ որ հոգւով Աստուծոյ խաւսի, և ասիցէ թէ նզովեալ Յիսուս. և ո՛չ որ կարէ ասել՝ Տէր զՅիսուս, եթէ ոչ հոգւո՛վն Սրբով» (Ա. Կորնթ., ԺԲ. 3):

Նոր Կտակարանում առկա ամենադիպուկ մարդ-Աստված մերձեցումը հանդիպում ենք Հաղորդության խորհրդի հաստատման ժամանակ՝ (Մատթ. ԻԶ 17-30, Մարկ. ԺԴ 12-26, Ղուկ. ԻԲ 7-23, Հովհ. ԺԳ 21-30, Ա. Կորնթ. ԺԱ 23-25):

Վերջին ընթրիքի ժամանակ հաստատած «Հաղորդության» խորհուրդը իրականացվելով և հաստատվելով մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի կողմից՝ մարդ-Աստված միավորման, աստվածայինին հաղորդակից լինելու վերջնագիծն է այս աշխարհում. «Եթէ ոչ կերիջիք զմարմին Որդւոյ մարդոյ և արբջիք զարին նորա, ոչ ունիք կեանս յանձինս: Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարին իմ, ունի զկեանս յաւիտենականս, և ես յարուցից զնա յաւուրն յետնում: Զի մարմին իմ՝ ճշմարիտ կերակուր է, և արին իմ՝ ճշմարիտ ըմպելի է: Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարին իմ, յիս բնակեսցէ, և ես ի նմա» (Հովհ. Զ 54-57):

Առաքելական թղթերում շատ հստակ նշվում է «Հաղորդության» խորհրդի փրկական և Քրիստոսի հետ մերձեցման նշանակությունը՝ «Իբրև զարդի ծնեալ մանկունս խօսուն և անխարդախ կաթինն փափաքիցէք, զի նովաւ աճիցէք ի փրկութիւն, եթե ճաշակիցէք զի քաղցր է Տէր» (Ա. Պետրոս Բ 2-3)¹:

բ. Մարդու «աստվածացման» գաղափարը նորապարունական մրաժողո՞ւների հայացքներում - Մարդու աստվածացման գաղափարը, որ իր ուրույն տեղն ունի նարեկյան աստվածաբանական դպրոցի մեջ, գալիս է շատ վաղուց: Անտիկ հույն փիլիսոփա Պլատոնը դեռևս իր երկու «Ֆեդոն և Թեետետ» աշխատություններում արտահայտում է երկրից որքան հնարավոր է շուտ փախչելու և Աստծուն միանալու անհրաժեշտության գաղափարը. «Իսկ ձեզ իմ դատավորներ, այժմ ես ուզում եմ բացատրել, թե ինչու իմ կարծիքով մարդը, որը իսկապես իր կյանքը նվիրեց փիլիսոփայությանը, մահվանից առաջ լի է զվարթությամբ և հույսով, որ ձեռք կբերի մեծագույն բարիքներ: Սիմմիաս և Կեբետ, այժմ կփորձեմ ցույց տալ, թե ինչպես է դա հնարավոր: Նրանք, ովքեր իսկապես նվիրված են փիլիսոփայությանը, զբաղված են միայն մի գործով մահանալով և մահով: Մարդիկ որպես կանոն սա չեն նկատում, սակայն եթե դա այդպես էլ լիներ, ապա անիմաստ է ամբողջ կյանքը ձգտել միայն սրան: Իսկ այնուհետև, երբ այն կողքիդ է հայտնվում դժգոհել, թե ինչու էիր այսքան երկար և

¹ Ա. Կորն., ԺԱ 27-29:

ջերմեռանդորեն պատրաստվում»¹: «Սակայն աստվածների շարքին չի կարող անցնել նա, ով փիլիսոփա չի եղել և չի մաքրվել մինչև վերջ, ոչ ոք, եթե նա չի ձգտել իմացություն: Այդ իսկ պատճառով իմ սիրելի Սիմմիաս և Կեբետ, ճշմարիտ փիլիսոփաները վանում են իրենցից մարմնի ցանկությունները, ամրանում են և ոչ մի ձևով չեն զիջում, չվախենալով աղքատությունից ի տարբերություն մեծամասնությանը, որոնք թեև ի տարբերություն փառասերների չեն վախենում անպատվությունից, որը տրվում է կյանքի կողմից, նրանք զուրկ են մնում ցանկություններից»²: «Սակայն չարը անջնջելի է, Թեոդոր, քանի որ միշտ բարուն հակառակ մի բան պետք է լինի: Աստվածների մեջ չարիքը չի արմատավորվել իսկ մահկանացու բնությանը և այս աշխարհին այն այցելում է ըստ անհրաժեշտության: Այդ իսկ պատճառով պետք է, որքան հնարավոր է շուտ փախչել այստեղից այնտեղ: Փախուստը Աստծուն բռնի կերպով նմանակումն է, իսկ Աստծուն նմանվել նշանակում է դառնալ բանականորեն արդար և բանականորեն բարեպաշտ»³: Մարդու փիլիսոփայության միջոցով Աստծուն նմանվելու գաղափարին հանդիպում ենք նաև հայազգի նորալատոնական փիլիսոփա Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրութեան» աշխատության մեջ, որտեղ մեջ է բերում Պլատոնի՝ մարդու ըստ իր կարողության սահմաններում աստվածանալու գաղափարը. «Համբառնայ այսուհետև աստոաստ Պլատոնն ի հեռի կատարումն, և ոչ պարզաբար ի հեռի, այլ ևս ի հեռագոյնն, որ ոչ ինչ ևս է, քան զնա անդր. քանզի սահմանէ զիմաստասիրութիւն՝ նմանութիւն Աստուծոյ ըստ կարողութեան մարդկան: Քանզի զի՞նչ այնպէս երանելի և վայելուչ կատարումն, որպէս զնմանիլ Աստուծոյ ըստ կարողութեան մարդկան»⁴ և իր կողմից տարբեր ուղիներով վերահաստատում է Պլատոնի այդ միտքը. «Եվ զի իմաստաստասէրն նման է Աստուծոյ՝ աստոաստ յայտ եղիցի. քանզի որովք կերպարանի աստուածայինն, նոքիմք կերպարանի և կատարեալ իմաստասէրն: Քանզի երիւքս այսոքիւք աստուածայինն կերպարանի՝ բարեան և գիտութեամբ և կարողութեամբ. որպէս և քերթողութիւնն յայտ առնէ ասելովն վասն բարոյն, թե Աստուածք տոողք բարեաց են, իսկ վասն գիտականին՝ թէ Աստուածք զամենայն ինչ գիտեն. իսկ վասն կարողութեան, թե Աստուածք յամենայնի կարողք գոն»⁵, նաև մեջբերում է անում Պլատոնի «Թեետետ» աշխատությունից⁶.

¹ Տե՛ս Платон, Федон, Пир, Федр, Парменид, Москва, 1999, էջ 14, 64a:

² Անդ, էջ 38, 82c-d:

³ Անդ, էջ 232, 176a-b:

⁴ Տե՛ս Դավիթ Անհաղթ, «Երկասիրութիւնք փիլիսոփայականք», Պրակք Ժ, Երևան, 1980, էջ 66:

⁵ Տե՛ս Դավիթ Անհաղթ, «Երկասիրութիւնք փիլիսոփայականք», էջ 67:

⁶ Անդ, էջ 69:

«Մարդ էակը, համաձայն Պլուտինոսի, համադրական բարդ կառույց է՝ բաղկացած երկու ներհակ բաղադրիչներից: Դրանցից մեկը՝ հոգեղենացած մարմինը կամ մարմնացած հոգին, արդյունք է հոգու ցանկացած հատվածի և նյութի մերձեցման: Այն ապրում է առօրեական (կամ հասարակ) կյանքով՝ տրված մարմնական հաճույքներին ու տառապանքներին: Մյուս բաղադրիչը նույնական է հոգու բանական հատվածին, «...որը վեր է մարմնից և որին պատկանում է վերընթաց շարժում, գեղեցիկն ու աստվածայինը» [II, 3, 9, 20-25]: Նա մեր հոգեմտավոր բարեկեցության աղբյուրն է, որի շնորհիվ «մենք ինքներս ենք»: Մարդկային կյանքի գերագույն իմաստն ինքնակատարելագործման ճիգով աստվածակերպ դառնալն է [I, 1, 3, 10]: Ըստ որում, այդ գործընթացը կայանում է մարդու բարոյական առաքինությունների ձևավորման ճանապարհով, «... որպեսզի ամեն ոք ենթարկվի իր [մեջ առկա] կառավարող սկզբին, ինչպես գինվորը հրամանատարին» [III, 3, 13, 25]: Անտարակույս, «կառավարող սկիզբը» բանական հատվածն է, որին պետք է ենթարկվի մարմնականը: Այլ խոսքով, Պլուտինոսը մարդ էակին դիտարկում է իբրև ենթարկելու և ենթարկվելու հարաբերությունների ամբողջություն»¹: Սակայն եթե ըստ նորպլատոնականների մարդու կեցության նպատակն է փախչել այս աշխարհից և միաձուլվել Միասնականին², ապա Նարեկացին մարմնի և հոգու միջև չի տեսնում հակադրություն, ավելին մարմինը այն վայրն է, որտեղ հոգին ինքնակատարելագործվում, զարգանում է, ուստի հանուն հոգու ոչ թե պետք է ժխտել մարմինը, այլ հնարավորին չափով պահպանել այն, որովհետև առանց մարմնի չկա հոգու վերելք:

Հակառակալսքն հանդերձեցեր զկազմած մարդոյս,
 Զոմն՝ ծանր, և զոմն՝ թեթև,
 Զմին՝ զով, և զմիւսն՝ հրային,
 Զի դիմադրութիւնն ի հակառակացն հարթ պահեցեալ՝
 Արդար կոչեսցոյք հաւատարիմ հաւասարութեամբն:
 և յայսմ ի դատման առաքինութեան
 Վերաբերեալ ընդ համբարձելոյն,
 Զխոնարհութիւնն առ կան դիտման անմոռաց պահեալ՝
 Պսակ ընկալցոյք ճգնատրական» (ԶԶ, ա, տող՝ 12 -20):

գ. «Անարվածացման» գաղափարը խոսքով Անձևացու և Անանիա Նարեկացու աշխատություններում; Մարդու աստվածացման գաղափարը, որպես

¹ Տե՛ս Պլուտինոս, Էննեադներ, Գիրք V, Երևան, 1999, էջ XXXVI – XXXVII:

² Տե՛ս Սեյրան Զաքարյան, Փիլիսոփայության պատմություն, Երևան, 2005, էջ 103:

վարդապետություն սկիզբ առնելով Պլատոնից և զարգանալով նորպլատոնականների կողմից, գալիս է իր վերջնական տեսքին, սակայն Նարեկացին մարդու «աստվածացման» հարցում իր բուն նախորդների աստվածաբանական և փիլիսոփայական հայացքների վրա է հիմնված և այդ հայացքների ամուր կրողն է: Նարեկյան դպրոցն իր ներկայացուցիչներով տարբերվում է նորպլատոնական մտածողներից այնքանով, որքանով որ ունի իր ուրույն հայացքները խնդրի վերաբերյալ: Նարեկյան «աստվածացման» վարդապետությունը լիովին տարբեր է նորպլատոնականների վարդապետությունից: Նախ որ քրիստոնեական Աստված և նորպլատոնական Աստված ամբողջովին տարբեր են իրարից, և ինչպես վերը նշեցինք, նորպլատոնականների կողմից աշխարհի, մարմնի մերժում, ինչը բացակա է նարեկյան դպրոցի մտածողությունից և նմանատիպ այլ տարբերություններ¹: Նարեկացու աստվածաբանական, խոհափիլիսոփայական հայացքները զարգացել են Խոսրով Անձևացու և Անանիա Նարեկացու հարուստ ժառանգության վրա: Այդ հայացքների թվում է նաև «աստվածացման» գաղափարը, ինչն իր զարգացմանն է հասնում Մատյանում՝ զարգանալով ու բյուրեղանալով նախ՝ Խոսրով Անձևացու, ապա՝ Անանիայի Նարեկացու աշխատություններում: Խոսրով Անձևացին իր «Մեկնութիւն ժամակարգութեան» մեջ փորձում է բացահայտել արարողապաշտություն, աղոթքների և սաղմոսների ներքին՝ հոգևոր իմաստը: Նախ պետք է նշել, որ Անանիա և Գրիգոր Նարեկացիներից առաջ Խոսրով Անձևացին զարգացնում է «ներքին» և «արտաքին» գիտելիքների, հոգևոր կենցաղավարության և աստվածահաղորդության գաղափարները: Իր «Մեկնութիւն ժամակարգութեան» գործում նշում է, որ ծեսի իմաստը հասու չէ շատերին և այդ պատճառով հարկ է համարում գրելու ժամակարգության բացատրություն և ցույց տալու, որ առանց արարողության ներքին կողմը հասկանալու հավատացյալը չի կարող ունենալ աստվածահաղորդություն: Հեղինակը, որն ընդհանրապես հանդես է գալիս իբրև ուղղափառ միստիկայի ներկայացուցիչ, եկեղեցական արարողակարգի, հասարակաց պահքի ու պարտավորությունների հետ շեշտում է փրկության անհատական ուղին, հոգևոր խորհուրդը, ներքին ծեսը, աստուածազգացողության ու աստուածահաղորդության հասնելու անմիջնորդ, ներանձնական ճանապարհը²: Մարդու աստվածահաղորդության, աստվածատեսության և աստվածացման գաղափարն իր ուրույն ձևակերպումն ունի Խոսրով Անձևացու մոտ. «Եվ եթե շատ ազտողն

¹ Տե՛ս Ասողիկ եպիսկոպոս Արիստակեսյան, Մեղքի և փրկության գաղափարը Գրիգոր Նարեկացու «Մատեն ողբերգութեան» մեջ, Էջմիածին, 1996, էջ 41:

² Տե՛ս Հրաչեայ Թամրազեան, Մատենագիրք հայոց, Ժ հատոր, Ժ դար, Անթիլիաս-Լիբանան, 2009, էջ 34:

*և շատ թողութիւն գտաւ ինդրի, և շատ սէր պարտի, որպէս ասաց Տէրն երբեմն՝ առ աշակերտան, և երբեմն՝ առ կին պոռնիկ, ապա յայտ է կարի առաւել պարտին մարդկան ազգս, քան զհրեշտակս, երախտահատոյց լինել Աստուծոյ յոգն սիրոյն և յաճախ ներողութեան և յանպատում և բազմառատ պարգևացն»¹:
գևացն»¹:*

«Հաղորդս արա զմեզ, Տէր, աղաչեմք զքեզ, աստուածային պարգևացն»:

Հաղորդս լինել հաւասարորդ է լինել»²:

«Թէ որ այդպիսի ահաւոր եւ անտանելի փառաքոյ էր, վասն զմեզ փրկելոյ մարդ եղեւ՝ ինքն ի մեր աղքատութիւնս իջեալ,

եւ մեզ իւր Աստուածութիւնն շնորհեաց»³:

«Զի ի հոգեւոր հարսանեացն արտաքս վարեցան,

զի չեղեն արժանիք ահաւոր

ժամուն մերձենալ առ երկնաւոր սեղանն

եւ ոչ երգակցել հրեշտակացն անդր

գումարելոց եւ ոչ ի Քրիստոս միանալ խորհրդովն

սրբով եւ մի հոգի նովալ լինել»⁴:

«Եւ եթէ Որդին Աստուծոյ, զԱստուծոյն ունելով թագաւորութիւն,

Աստուած է, յայտ է,

թէ եւ սոքա, որ գնոյն ժառանգեն զթագաւորութիւն,

աստուածանան»⁵:

Նարեկյան դպրոցի հաջորդ անկյունաքարը լինելով՝ Անանիա Նարեկացին ընդհանրապէս մտածողութեան և դպրոցի վարդապետական հայացքների զարգացման տեսանկյունից կամուրջի դեր է կատարում Խոսրով Անձևացու և Գրիգոր Նարեկացու միջև: Անանիա Նարեկացին զարգացնում է Խոսրով Անձևացու հայացքները և փոխանցում Ս. Գրիգոր Նարեկացուն, ով և արդեն հասնում է իր և իր ուսուցիչների կողմից զարգացրած մտածողութեան, վարդապետութեան, ներքին կատարելագործման գագաթնակետին և արժանանում աստված-

¹ Անդ., էջ 35:

² Անդ., էջ 180:

³ Անդ., էջ 196:

⁴ Անդ., էջ 191:

⁵ Անդ., էջ 79:

տեսություն: «Անանիա Նարեկացին ավելի խորացնում ու զարգացնում է արևելա-քրիստոնեական միատիկայի էական գաղափարները, ավելի շեշտում ներքին ծեսի, ներքին պաշտամունքի գաղափարը: Բարոյական հայացքները նրա մոտ հանդես են գալիս առավել համակարգված՝ խրատագրքի տեսքով: Նա առավել անհատական, ներանձնական ուղի է նշում փրկագործության ճանապարհին, համընդհանուր, «հասարակաց» ծեսի կողքին առավել ընդգծում «ներանձնական» ծեսի դերն ու նշանակությունը մարդու փրկության գործում»¹:

Խոսքով Անձևացու մոտ հանդիպում ենք միայն արձակ գրվածքների, այնինչ Անանիա Նարեկացին ունի նաև չափածո գործեր: Անանիա Նարեկացու մոտ արդեն չափածո գրվածքներում արտահայտվում են Նարեկյան դպրոցին բնորոշ աստվածաբանական հայացքներ: Նարեկյան դպրոցին բնորոշ ապաշխարության ճանապարհին անհրաժեշտ և խորն ապաշխարության ապրումները, մարդկային արցունքները և զղջումն Անանիա Նարեկացու մոտ ավելի հոգեբանական խոր մեկնաբանություն են ստանում: Փիլիսոփայության, աստվածաբանության, երաժշտության մեջ գիտուն լինելով՝ Անանիա Նարեկացին կարողանում է ավելի պարզ և բազմակողմանի ներկայացնել իր հայացքները:

Անանիա Նարեկացին խոր գիտելիքներ է հանդես բերում «արտաքին» գիտության տարբեր ոլորտներում. իր փիլիսոփայական-աստվածաբանական երկերում նա շոշափում է գոյաբանական, իմացաբանական, տրամաբանական, մաթեմատիկական, աստղագիտական, տարրաբանական, մարդակազմական ու բժշկագիտական, քերականական մի շարք խնդիրներ²: Գեղեցիկ նկարագրում է տալիս Ուխտանեսս պատմիչը իր ուսուցչին, որը անհրաժեշտ է մեջբերել. «Եվ ըստ վարուցն մաքրութեան կրօնիցն գովելոյ հոգիազարդ փիլիսոփայութեամբ և զբազումս եհան ի հրահանգս իմաստից գիտութեան... զքո բանիբուն պոետիկոս դաստաշարժիդ վարժս... և զընթացս լեզոիդ՝ որ քնար է հոգւոյն...»³:

Ահա և հատվածներ Անանիա Նարեկացու «Յաղագս զղջման և արտասոաց» և «Սակս բացայայտութեան թողոց» աշխատություններից, ուր հեղինակը արտահայտում է իր մտքերը մարդու «աստվածացման» վերաբերյալ:

«Այլ եւ գրեալ է, թե՛ «Ամենայն ինչ պիղծ է դիակալացն՝ պիղծ են աղալթք նորա, պիղծ եւ անպիտան են տարածումն ձեռաց նորա,

¹ Տե՛ս Հրայա Թամրազյան, Նարեկյան դպրոցը, Երևան, 1999, էջ 215-216:

² Տե՛ս Հ. Թամրազյան, Անանիա Նարեկացի, Երևան, 1986, էջ 330:

³ Տե՛ս Ուխտանէս Եպիսկոպոս, Պատմութիւն հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 8:

զի որ ռիսա ընդ ընկերին ունիցի, անհնար է աղաթից նորա առ Աստուած ելանել»¹:

«Վասն այսորիկ ասէ Տէրն. «Զգոյշ լերուք ողորմութեան, պահոց եւ աղաթից ձերոց» -, քանզի որչափ վասն առաքինութեան ջանաս, այնչափ եւ վասն ընտրութեան պարտ է ջանալ, որ ի հաճոյս Աստուծոյ կարես առնել»²:

«Եւ այսոքիկ բաղկացեալ սահմանին բոլոր թիւք՝ յանգեալք քառիւք տեսակաւոր: Նաեւ բոլոր արարածք ի քառից նիւթոց բաղկացեալ գոյանան: Այլ եւ քառիւք թոալք սահմանին առաքինութիւնք, որով կատարի մարդն Աստուծոյ՝ երիւք բնական եւ մին ստացական: Զի եռամասնեա բնատրի հոգին, եւ միւսն եւս, ստացական, յարդարեալ ի սոսա՝ որ է արդարութիւն՝ բացակատարեն զմարդն ըստ նմանութեան Աստուծոյ»³:

«Եւ զոարճութիւն այս մակաբերեալ թեակոխէ արփիացեալ մերձ առ հեռագոյն ենթակայն, որ է նմանիլ Աստուծոյ»⁴:

Եվ այսպես Ս. Գրիգոր Նարեկացին մարդկային մեղքերը համարում է կենդանական աշխարհից մարմնի մեջ պահպանված հակումներ, որոնք մարդուն միշտ էլ կարող են վայր իջեցնել իր բարձր դիրքից: Սակայն Սուրբ Հոգու առկայությունը մարդու ամենագորեղ միջոցն է՝ պայքարելու մեղքերի դեմ: Հոգին իր մեջ կրելով մարդ կարող է բարոյապես զարգանալ: Նարեկացու Մատյանի քնարական հերոսն անվերջ որոնման մեջ գտնվող և կատարելության ձգտող մարդն է, որ պայքարում է ոգու ներդաշնակության համար: Բանաստեղծը ցանկանում է տեսնել թերություններից ու արատներից մաքրված և իր մաքրությունը աստվածացող մարդուն, որն այդ ճանապարհով պիտի միանա ու միաձուլվի «առաւելութիւն անհասանելի» աստվածային էությունը⁵: Նարեկացին ձգտում է ամեն կերպ մարդու գիտակցությանը հասցնել Քրիստոսի փրկագործության վարդապետությունը: Որովհետև աշխարհիկ կյանքի խաբուսիկ

¹ Տե՛ս Հրաչեայ Թամրազեան, Մատենագիրք հայոց, Ժ հատոր, Ժ դար, էջ 369:

² Տե՛ս Հրաչեայ Թամրազեան, Մատենագիրք հայոց, Ժ հատոր, Ժ դար, էջ 374:

³ Անդ, էջ 444:

⁴ Անդ:

⁵ Տե՛ս Հովհաննես Այվազյան, Մարդու բարոյական կատարելագործման պրոբլեմը Նարեկացու և Դոստոևսկու ստեղծագործություններում, «Էջմիածին», 2005, Բ-Գ, էջ 161:

վայելքները կարող են գայթակղել մարդուն, ով կյանքի արեկոծ ծովում կխեղդվի, եթե իրեն առաջնորդ չունենա Քրիստոսին¹:

Ամեն մարդ, ինչ չափով էլ լինի մեղքի մեջ, զարգացնելով իր հոգին կարող է միանալ Աստծու հետ, իհարկե, միայն Քրիստոսի մեջ և Քրիստոսի միջոցով: Մարդկանց փրկության համար աշխարհ գալով՝ Քրիստոս առաջին անգամ մարդուն տվեց «Աստված» դառնալու կարողությունը:

«Եւ զոր ահաւորն է ասել, կարգեմ աստանար,
Յիշատակ եղեալ մեծիդ երախտեաց՝
Աստուած իսկ լինել ընտրութեամբ շնորհին
Եւ ընդ հաստողիդ միանալ՝ տէրունի մարմնոյդ ճաշակմամբ
Եւ ընդ լուսոյդ կենաց խառնութեամբ,
Զոր կատարումս երջանիկ խոստման,
Ըստ Պաղոսի բանին, ոչ ունէր Արեւն» (ԾԲ, գ, տող՝ 53-59):

Ս. Գրիգոր Նարեկացու հոգևոր իդեալը մարդու աստվածացման գաղափարն է, ներքին մարդու մաքրագործության տևական ուղին, որ գերագույն նշանակություն ունի խորհրդագրած հայեցողի համար, որի կարևորագույն օղակը հոգևոր վերառաքման շղթայի մեջ ներքին աղոթքն է: Նարեկա վանքի դպրոցի ներկայացուցիչները փրկագործության, կատարելության, աստվածացման գաղափարները կապում էին ներքին մարդու ուսմունքին. «Մի երկաքանչիւրոց գոյութեանց մերոց իրաւամբք կշտամբութիւն, զի մի՛ կիսամասնեայ առ մարդն ներքին և առ արտաքին՝ չարի ու կամ բարոյ փոխատրութիւնն կարծեսցի՝ յանմահ զարութիւն արքայական որդեգրութեանն, զի ընտրելութեամբ երկրայնովս առաւելութիւն վերնումն թագաւորութեան յայտնապէս ճշմարտեսցի» (ՀԵ, Է, տող 132):

Ըստ Ս. Գրիգոր Նարեկացու՝ մարդկային բնությունն սկզբից ևեթ աստվածային է, և Նարեկացին իր առաջ խնդիր է դնում ինքնակատարելագործման միջոցով հասնել մաքրության, անապականության և անարատության: Շատ դեպքերում Նարեկացին իրեն ասելով նկատի ունի ընդհանուր մարդկությանը, և նրա կարծիքով, ընդհանրապես մարդը փորձում ու ձգտում է մերձենալ կատարյալին, որ է և Աստված: Ամեն մարդ իր մեջ կրում է աստվածայինը և բարոյական մաքրագործմամբ կարող է հասնել հնարավոր աստվածանմանության²: Նարեկացին շատ տեղերում անհատ չէ, այլ ամբողջ մարդկությունն իր

¹ Տե՛ս Առաքել Հովհաննիսյան, Գրիգոր Նարեկացու «Մատենանոցի ողբերգութեան» պոեմը որպես համամարդկային հոգեվերլուծություն, «Էջմիածին», 2003, Ը, էջ 80:

² Տե՛ս Ժենյա Քալանթարյան, Գրիգոր Նարեկացու «Մատենանոցի ողբերգութեան» պոեմի և սաղմոսների առնչությունները, Ս. Էջմիածին, 1997, էջ 37:

մեջ խտացրած անհատականություն: Մատյանի մեջ պատկերված ապրումները՝ հոգեկան տենչանքները, տագնապներն ու տառապանքները, գրեթե ամենուր դրսևորվում են զգացող անհատականության «ես»-ի միջոցով: «Մենք»-ը Նարեկացու երկերում հանդիպում է շատ հազվադեպ, այն էլ համարյա միշտ «ես»-ին զուգադիր¹: Քրիստոսի մարդեղության հեռանկարը առկա է ի սկզբանե, մի օր կազմավորված էակը՝ ամբողջովին կհամապատասխանի այդ սկզբնատիպին: Այդ իդեալն է ամփոփված իրական ես-ի հիմքում, որ մարդկային էակը կորցրել է իր գործած մեղքի պատճառով: Այսպես, «չեշտադրելով անհատի տարբերությունը, առանձնահատկությունները՝ անհատի ողջ բարոյական կյանքի հիմքը սկզբնական այդ նմանությունը տենչալու, «Նախատիպին» միանալու մեջ է՝ բանականության և առաքինության ձգտման մեջ»²:

«Արդ, ես՝ ճշգրիտ պատկեր ամենայն երկրի,
Զիմս խառնեալ ընդ նոցին պարտիս
Եւ ի նոցայոցն զառ իս դառնութիւն կրկին առաւելեալ,
Նոքաք հեծեծեցից,
Թէպէտ եւ չէ ինչ պիտոյ գարշութեան գունոյ
Դարձեալ տգեղութիւն» (Ծ, գ, տող՝ 54-59):

Ամբողջ մարդկության գործած և գործվելիք մեղքերը վերագրում է իրեն, այսինքն՝ մարդուն համարում է ամենամեղավոր արարածը այս աշխարհում.

«Եվ քանզի առ ամենայն հասարակ տնկեցեալ յերկրի
ազգ բանականաց՝
Այս պատուէր նկարագրական նորոգ մատենի ողբոց նուագի,
Որ զամենեցունց ունի զկրից պատահմանց, նշաւակեալ
յիւրում պատկերի,
Իբր կցորդ մեծ գիտակական կարեաց համայնից՝
Առ բոլոր գումարս բազմահոլով տիեզերակոյտ քրիստոնէից,
Առ նախնի ժամս ժամանողաց
Եւ առ երկրորդ կոչեցեալ չափով արբունս,

¹ Տե՛ս **Վարազ Ներսիսյան**, Նարեկացու «Մատենի» քնարական հերոսը, «Էջմիածին», 2003, ժԲ, էջ 54:

² Տե՛ս **Աննի Մահե և ժան-Պիեռ Մահե**, Գրիգոր Նարեկացին և իր «Մատենան ողբերգութեան» երկը, Երևան, 2004, էջ 222-223:

Առ որ ի կատարած ատյուն ընկալեալ սակաւաձեռն ծերութեամբն,

Առ պարտաւորս եւ արդարս,

Առ ինքնագով բարձրայանն

Եվ առ սխալեալ անձնադատ գտեալն,

Առ բարիս եւ եղեռնագործս...» (Գ, բ, տող 47-58):

Միայն աստվածային պատվիրաններին հետևելով և անգամ ճգնակեցութեամբ չես կարող հասնել լիովին կատարելության և փրկություն ձեռք չես բերի, եթե մաքուր և կատարյալ չես ներքնապես¹:

Նարեկացին Քրիստոսի մարդեղացման աստվածային խորհրդի հետ է կապում մարդու մաքրագործության, փրկագործության գաղափարը. «...երկրային կյանքում հոգով զարգանալու և կատարելագործվելու համար, որի մեջ էլ նա տեսնում է իրական փրկությունը, մարդը կարիք չի զգում ոչ մի միջնորդության: Յուրաքանչյուր մարդ, իր առջև որպես ուղեցույց ունենալով իրեալական-կատարյալ մարդու՝ Քրիստոսի կերպարը և առաջնորդվելով Նրա պատգամներով, իր սեփական ուժերով կարող է հոգով կատարելագործվել և Աստծուն նմանվելով մոտենալ անսահման կատարելությանը: Ըստ այդմ էլ, Նարեկացու կարծիքով մարդը սկզբունքորեն կարող է դառնալ կատարյալ մարդ՝ մարդ-Աստված: Այսպիսով, մարդն Աստված դառնալու նարեկյան սկզբունքի մեջ դրված է ոչ թե անհատի մեկուսացման և էքստազային միջոցներով Աստծու հետ կապի մեջ մտնելու կամ թե աշխարհն ու մարմինը ժխտելով, հանդերձյալում Նրան միանալու հարցը, այլ՝ մարմնականի մեջ հոգեկանի զարգացման և կատարելագործման խնդիրը: Եվ դա, ըստ Նարեկացու, մարդկությանը դեպի իրական երջանկությունը տանող միակ ուղին է»²:

Նարեկացու ստեղծագործություններում և հատկապես Մատյանում է խարսխված մարդու աստվածացման նարեկյան ուրույն ուղին: Եթե ըստ միատիցիզմի այլ դրսևորումների մարդ-Աստված ուղին դրսևորվում է որպես էքստազային միություն, ապա Նարեկացու մոտ միայն հոգու կատարելագործման միջոցով կարելի է հասնել աստվածացման, նախատիպ ունենալով Քրիստոսին³:

«Ամենակարող զարույթին ահեղ, բոլորից Աստուած,
արինեալ տէր Քրիստոս,

¹ Տե՛ս Գիւտ եպիսկոպոս, Արեւելեան անապատականը եւ «Նարեկ»-ը, Երուսաղէմ, 1937, էջ 179:

² Տե՛ս Դավթյան Հ. Կ., Լալայան Է. Վ. «Նարեկացու աշխարհայացքը», Երևան, 1986, էջ 49:

³ Տե՛ս Յակոբ Նալեան, Գիրք մեկնութեան աղօթից Սրբոյն Գրիգորի Նարեկացոյ, Կ. Պոլիս, 1743, էջ 22-29:

Որո՞վք սահմանեսցի կշռութեամբ չափու՝
 Հաստողիդ ընդ հողոյս հաւասարութին կցորդեալ:
 Քանզի մնաս յայտսիկ անբաւ եւ անհետազատելի,
 Ամենեւին բարի, անմասն բարկութեան խաւարի,
 Ուստի յոյժ նոազ են քում մեծութեան աստեղացոյ թի,
 Զորս գոյացուցեալ յոչէից՝ յորջորջմամբ անոանց կնքեցեր,
 Եւ կամ հիպօ երկրի, ի յաւդս հեղեալ,
 Զոր ի չգոյից հաստեալ՝ տարածումն յատակի կառուցեր,-
 Քան ինձ նախագրեալ համարդ սակաւութեան,
 Որով քեզ նմանիլ վարդապետեցիր» (ԻԹ, ք, տող 36-46):

Ըստ Սբ. Գրիգոր Նարեկացու մարդու միտքը հիմնականում պետք է գործի և նպաստի հոգու զարգացմանը, ձգտի նմանվել Աստծուն, այս դեպքում՝ Քրիստոսին:

Ի մի բերելով ուսումնասիրության արդյունքները, պետք է ասել որ Նարեկացին յուրահատուկ կերպով է ընկալում Քրիստոսին, քանզի Նարեկա վանքի սուրբ հայրը աստվածատես է: Անշուշտ, մեր երանելի վարդապետը սեփական աչքերով տեսել է Քրիստոսին, պատարագի ժամանակ զգացել և շոշափել է պատարագվող Տիրոջը և Ս. Հաղորդության միջոցով ընդունել իր մարմնի մեջ՝ միավորվելով Տիրոջ հետ, սակայն միևնույն է Ս. Գրիգոր Նարեկացու համար Քրիստոս ամբողջովին մնում է անհասկանալի, անպատմելի մի գոյություն:

Ինչպես մենք նկատում են Ս. Գրիգոր Նարեկացու համար ամենակարևոր պայմանը Քրիստոսի փրկագործող լինելն է, քանզի Քրիստոս, Աստված լինելով հանդերձ, հանձն առավ մարդեղանալ, մահանալ և հարություն առնել՝ փրկելով մարդկությանը: Նկատելի մի փաստ է, որ «Մատյան Ողբերգության» ամեն մի տող կարծես պարունակում է Քրիստոսի կենարար արյան մի կաթիլ: Եվ մեզ՝ քրիստոնյաներիս համար, Քրիստոսի արյան կաթիլներն են, որ կենդանացնում են մեղավոր մարդուն՝ հավերժական կյանք են պարգևում քրիստոնյային, քանզի ով խմում է Քրիստոսի կենարար արյունը և ճաշակում կենարար մարմինը, ապրում է հավիտյան:

**ՄԱՐԴՈՒ ԱՍՏՎԱԾԱՑՄԱՆ ՈՒՂԻՆ
 ԸՍՏ ՍԲ. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ**

Տ. Հեթում քահանա Թարվերդյան

Բանալի բառեր՝ Աստված, Քրիստոս, Ս. Գրիգոր Նարեկացի, նորալլաբոնականությունը, Աստվածացում, մարդացում, փրկագործություն, պարկեր, նմանություն,

շնորհի, աստվածանմանություն, էություն, բնություն, մաքրագործում, Ս.Հաղորդություն, միացում:

Ս.Գրիգոր Նարեկացին (950-1003) նշանավոր հայ բանաստեղծ և գրող է, ով արևելա-քրիստոնեական խորհրդաբանության ներկայացուցիչն է Հայաստանյայց Առաքելական Ս.Եկեղեցում: Իր ամբողջ կյանքը և գործունեությունը կապված է Նարեկա վանքի հետ, որտեղ գործում էր այն ժամանակի նշանավոր աստվածաբանական դպրոցը՝ գլխավորությամբ աստվածաբան, բանաստեղծ, պատմիչ, Ս. Գրքի մեկնաբան Անանիա Նարեկացու: Գրեթե ամբողջ կյանքը Գրիգոր Նարեկացին անցկացրել է Նարեկա վանքում, որտեղ մեծ և հարուստ գրականություն կար, որտեղ հնարավորություն ուներ կարդալ անտիկ շրջանի փիլիսոփաների և եկեղեցու հայրերի աշխատանքները:

Ս.Գրիգոր Նարեկացին շատ էր աղոթում և այդ պատճառով էլ նրան անվանում էին անքուն վանական: Ստացել է վարդապետական աստիճան: Դասավանդում էր վանքին կից դպրոցում: Երգ երգոց աշխատության հեղինակն է, որը լավագույն մեկնողական գործն է:

Գրիգոր Նարեկացու պոեզիան շատ աստվածաշնչային է, տպավորիչ, մեջբերված աստվածաշնչյան բազում պատմություններով:

Մատյան Ողբերգության աշխատությունը խորհրդածություն է կյանքի մասին, ինչպես նաև անդրադարձ է մարդու անկատարության և մեղսավոր վիճակի: Սա վստահելի զրույց է, հոգու և Աստծու միջև, ով ձգտում և փափագում է ապաշխարության և մաքրության:

Ծանոթանալով Նարեկացու ամբողջ մտավոր ժառանգությանը կարելի է ասել, որ Ս.Գրիգոր Նարեկացու ստեղծագործություններում զգալի է նորավատոնականության շունչը:

ПУТЬ ОБОЖЕСТВЛЕНИЕ ЧЕЛОВЕКА В СООТВЕТСТВИИ СВ. ГРИГОРИ НАРЕКАЦИ

Иерей Хетум Тарвердян

Ключевые слова: Бог, Христос, Св. Григор Нарекаци, Неоплатонизм, Обожествление, Стал Человеком, Спасение, Изображение, Сходство, Дар, Образ и подобие Божии, Суть, Природа, Совершенствоваться, С. Евхаристия, Объединение.

Григор Нарекаци (950-1003), армянский духовный писатель и поэт, представитель восточнохристианский мистики св. Армянской Апостольской Церкви. Его жизнь и творчество связаны с Нарекским монастырем, где существовала одна из крупнейших литературно-богословских школ того времени во главе с богословом, поэтом, историком и толкователем Свящ. Писания Ананием Нарекаци. Почти всю жизнь Григор провёл в Нарекском монастыре с богатой библиотекой, где имел возможность читать труды античных философов в оригинале и труды Отцов Церкви. Григор много молился по ночам, поэтому его называли неусыпным. Он получил сан архимандрита. Преподавал в школе при монастыре. Автор одного из лучших толкований Песни Песней

и многочисленных поэтических произведений. Поэзия Нарекаци глубоко библейчна, пронизана образами, темами и реалиями священной истории. При этом её отличает личный характер. В Книге скорбных песнопений как и в Великом каноне Андрея Критского, события и лица обоих Заветов служат отправной точкой для раздумий о жизни, о несовершенстве и греховности человека. Это доверительная беседа, которую ведёт с Богом душа, исполненная покаяния и жажды чистоты. Помимо библейских сюжетов и основ, истоки творчества Григора охватывают философию неоплатонизма.

THE WAY OF DEIFICATION OF MAN ACCORDING ST. GREGORY OF NAREK

Fr. Hethoum Tarverdyan

Keywords: *God, Christ, St. Gregory of Narek, Neoplatonism, deification, became man, Salvation, Image, Similarity, gift, image and likeness of God, Essence, Nature, Improve, S. Eucharist, Association.*

Grigor Narekatsi (950-1003) is an Armenian spiritual writer and poet, representative of the Eastern Christian mysticism of St. Armenian Apostolic Church. His life and work are connected with Narek monastery, where used to be one of the greatest schools of literary and theology of the time, headed by the poet, historian and interpreter of the Holy Book Anania Narekatsi. Almost all his life Grigor spent in Narek monastery which had a rich library where he had the opportunity to read the works of ancient philosophers, in original, as well as the writings of Church Fathers. Grigor used to pray a lot at night, therefore he was called indefatigable. He received the rank of Archimandrite. He taught at the Monastery school. He is the author of one of the best interpretations of "Song of the Songs" and numerous works of poetry.

Narekatsi's poetry is profoundly biblical, riddled with images, themes and realities of the sacred history. At the same time, it features a personal nature. In the Book of Lamentations as in the Great Canon of St. Andrew of Crete, events and personages of both Testaments are the starting point for thoughts about life, imperfectness and sinfulness of man. This is a confidential conversation, that the soul makes with God, full of repentance and thirst for purity. In addition to the biblical scenes and fundamentals, the origins of Gregory's works encompass the philosophy of Neoplatonism.